ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Ավետիսյան Ս., Ավետիսյան Ա. (2023), Հարավային Կովկասի երկրների պարենային անվտանգության համեմատական վերլուծություն, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2(2), 57-76, DOI: 10.52174/29538114_2023.2-57
Ներկայացվել է խմբագրություն՝ 27.06.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 28.06.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 10.11.2023 թ.

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0002-3019-4075

ԱՇՈՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
https://orcid.org/0000-0001-7480-5328

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի բոլոր երկրների համար բնակչության պարենավորման և պարենային անվտանգության հիմնախնդիրը տնտեսական քաղաքականության ամենակարևոր գերակայությունների շարքում է: Իհարկե, տարբեր երկրներում տարբեր է իրավիճակը, ինչը և պայմանավորում է երկրի սոցիալական ապահովության և ագրարային քաղաքականության բնույթը, ներքին և արտաքին սպառնալիքների հաղթահարման ռազմավարությունն ու գործնական քայլերը: Բոլոր առումներով՝ ագրարային ոլորտի զարգացման դիտարկումը պարենային անվտանգության տեսանկյունից հնարավորություն է ընձեռում ուշադրության կենտրոնում պահելու մարդու ամենաառաջնային՝ սնվելու պահանջմունքը և ձգտելու դրա առավել ամբողջական ու արդյունավետ բավարարմանը:

Հարավային Կովկասը բավականին անկայուն ու բարդ տարածաշրջան է, որտեղ, հատկապես հետխորհրդային շրջանում, շարունակական բնույթ են կրում ազգամիջյան բախումները, միջպետական հակամարտությունները և անգամ լոկալ պատերազմները: Այս ամենն իր ազդեցությունն է թողնում երկրների սոցիալ-տնտեսական զարգաց-

ման, հատկապես բնակչության կենսամակարդակի և պարենային անվտանգության վրա: Հողային և ջրային ռեսուրսների, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների օգտագործման ռիսկերը խաթարում են տնտեսության, այդ թվում՝ գյուղատնտեսության բնականոն զարգացումը:

Սույն հոդվածի նպատակն է համաշխարհային պարենային շուկայի վերջին տասնամյակի զարգացումների համատեքստում լուսաբանել Հարավային Կովկասի երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պարենային անվտանգության հիմնախնդիրները, շեշտադրել արտաքին և ներքին սպառնալիքները, ինչպես նաև նախանշել դրանց կարգավորման ու դիմակայման հիմնական ուղիները: Աշխատանքում նաև ուշադրություն է դարձվում պարենային անվտանգության գնահատման մեթոդաբանության հարցերին, ներկայացվում են կիրառական նշանակություն ունեցող առաջարկություններ և դրանց իրականացման կառուցակարգեր:

Հիմնաբառեր. *Հարավային Կովկաս, գյուղատնտեսություն, պարեն, ինքնաբավություն, տեխնոլոգիա, աջակցություն, առևտուր*

JEL: N50, Q18

DOI: 10.52174/29538114_2023.2-57

Ներածություն: Բնակչության պարենային ապահովումը քսանմեկերորդ դարի ամենակարևոր մարտահրավերներից մեկն է: Այսօր Երկրի վրա ապրում է շուրջ 8,09 միլիարդ մարդ: Մարդկությունից պահանջվել է ավելի քան 200,000 տարի, որ բնակչության թիվը հասնի 1 միլիարդի (մոտ 1800 թ.) և ընդամենը մոտ 200 տարի, որ այդ թիվը հասնի 7 միլիարդի[1]:

Բնակչության այսպիսի սրընթաց աճին զուգընթաց, աստիճանաբար սրվում է պարենային ապահովման հիմնախնդիրը: Մոլորակի 8 միլիարդ մարդուց ավելի քան 3 միլիարդը դեռևս չի կարող իրեն թույլ տալ լիարժեք ու առողջ սննդակարգ[2]: Խնդիրը հատկապես բարդացել է վերջին տարիներին, ինչը, գլոբալ առումով, պայմանավորված է գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության, COVID-19 համավարակի ազդեցության, տարածաշրջանային հակամարտությունների սրման և միջազգային առևտրային կապերի քաղաքականացման գործոններով:

«Մենք բախվում ենք աննախադեպ համաշխարհային պարենային ճգնաժամի, և բոլոր ցուցումները ցույց են տալիս, որ ամենավատը դեռևս առջևում է: Վերջին երեք տարիների ընթացքում սովյալների թիվը բազմիցս հասել է նոր գագաթնակետերի: Թույլ տվեք հստակ ասել. իրավիճակը վատթարանում է և կարող է ավելի վատթարանալ, եթե չիրականացվեն զանգվածային և համակարգված ջանքեր այս ճգնաժամի արմատական պատճառները վերացնելու համար»,- ասել է ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի գործադիր տնօրեն Դեյվիդ Բիսլին[3]:

Պարենային անվտանգության ռիսկերը չեն շրջանցում նաև Հարավային Կովկասի տարածաշրջանը: Ավելին, ռուս-ուկրաինական պատերազմը, հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման ձգձգումները, հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հիմնախնդիրները, Վրաստանի և Ռուսաստանի միջև առկա տարաձայնությունները, ինչպես նաև նոր աշխարհակարգի վերադասավորումներն իրենց բացասական ազդեցությունն

[1] Տե՛ս https://countrymeters.info/ru/World

[2] Տե՛ս https://www.interfax.ru/world/902955

[3] https://news.un.org/ru/story/2022/10/1433417

են թողնում տարածաշրջանի երկրների ինտեգրման ու զարգացման վրա: Նման իրավիճակում առաջնահերթ խնդիր է խաղաղ պայմաններում ագրարային ներուժի խելամիտ ու արդյունավետ օգտագործումը, ժամանակակից առաջադիմական տեխնոլոգիաների կիրառումը և միջազգային առևտրի միջոցով բնակչության պարենային անվտանգության պատշաճ մակարդակի ձեռքբերումը:

Սովի կամ պարենային անվտանգության ռիսկայնության խնդիրը մարդկության առաջ ծառացել է զարգացման ողջ պատմության ընթացքում և, չնայած միջազգային կազմակերպությունների բոլոր ջանքերին, դեռևս վերջնականապես չի լուծվել: Գիտակցելով այս խնդրի լրջությունը՝ 2015 թվականին ՄԱԿ-ը սովի դեմ պայքարի խնդիրը ներառեց իր Կայուն զարգացման նպատակների մեջ (ԿԶՆ): Ընդ որում, դա դիտարկվում է որպես երկրորդ կարևոր խնդիր (աղքատության վերացումից հետո): Որպես այս նպատակների մաս՝ ձևակերպվել են հետևյալ թիրախները. մինչև 2030 թվականը վերջ դնել սովին, պարենային անապահովության և թերսնման բոլոր ձևերին[4]:

Գրականության ակնարկ: Պարենային անվտանգության ապահովմանը և գյուղատնտեսության կայուն զարգացմանը նվիրված հետազոտությունները համեմատաբար նոր ուղղություն են տնտեսագիտության մեջ, քանի որ դրանք սկզբնավորվել են 20-րդ դարի վերջերին: Փոփոխվող տնտեսության համատեքստում այս խնդիրը բարդ է և բազմակողմանի, ուստի ավելի մեծ ուշադրության է արժանանում ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական գրականության մեջ: Զգալի թվով աշխատություններ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են հետազոտական թեմայի հարցերին[5]:

Պարենային անվտանգության հիմնախնդիրը հետխորհրդային երկրներում առավել գիտական հիմքերի վրա դրվեց 1990-ական թվականների կեսերից[6]: Այս առումով, առավել նշանակալի է Ռուսաստանի և Բելառուսի գիտական դպրոցների դերակատարությունը:

Հատկապես այդ տարիներին նշված երկրների գիտնականները բազմակողմանիորեն անդրադարձել են պարենային անվտանգության մեթոդաբանությանը, տեսական ու գործնական հարցերին: Դա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ այս երկրներում ընդունված մի շարք կարևոր օրենքներ և նորմատիվ ակտեր նպաստել են նաև ԱՊՀ մյուս երկրներում պարենային անվտանգության իրավական հիմքերի ձևավորմանը: Այդուհանդերձ, պարենային անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրությունը շարունակում է մնալ հրատապ, քանի որ աշխարհաքաղաքական իրադարձությունները և մարտահրավերները նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրում ագրոպարենային ոլորտի և միջազգային առևտրի զարգացմանը: Բացի այդ, կան տեսական,

---

[4] Տե՛ս Продовольственная безопасность и раскрытие агропромышленного потенциала Евразийского региона. Доклады и рабочие документы, 23/1, Алматы, 2023, https://eabr.org/upload/iblock/8b7/EDB_2023_Report-1_Food-Security_rus.pdf

[5] Տե՛ս **Бородин А. И., Выгодчикова И. Ю., Дзюба Е. И., Панаедова Г. И.,** Продовольственная безопасность: меры финансовой господдержки устойчивого развития сельского хозяйства регионов России. *Финансы: теория и* практика, 25(2), 2021:

[6] Տե՛ս **Костяев А.И.,** О необходимости новой парадигмы продовольственной безопасности России, https://cyberleninka.ru/article/n/o-neobhodimosti-novoy-paradigmy-prodovolstvennoy-bezopasnosti-rossii/viewer

հատկապես գիտամեթոդական որոշակի հարցադրումներ, որոնք պահանջում են նոր ուսումնասիրություններ և նոր մոտեցումներ: Բավական է նշել, որ անգամ «պարենային անվտանգություն» հասկացության մեկնաբանման առումով դեռևս միակարծություն չկա: Ակադեմիկոս Ի. Գ. Ուշաչևի կարծիքով՝ պարենային անվտանգության ներքո կարելի է հասկանալ. «....բնակչության բնականոն կենսագործունեության մակարդակում բնակչության պարենային պահանջմունքների բավարարման պետության կարողություն»[7]: Գրեթե համանման դիրքորոշում է արտահայտում պրոֆ. Ե. Վ. Սերովան, որը ներկայացնում է պարենային անվտանգության հետևյալ դիրքորոշումը. «....երկրի բնակչության հիմնական մասի համար սննդամթերքի հասանելիության մակարդակ, որն անհրաժեշտ է կյանքի բնականոն վիճակը պահպանելու համար»[8]: Ակադեմիկոս Վ. Ի. Նազարենկոյի կարծիքով՝ «....պարենային անվտանգությունը մեծ թվով աստիճանակարգային խնդիրների բարդ համակարգ է, որն ապահովում է ինչպես արտադրողների, այնպես էլ սպառողների, շուկայի և բուն պետության կայուն գոյակցություն»[9]: Ն. Ի. Շագայդան և Վ. Յա. Ուզունը «Պարենային անվտանգությունը Ռուսաստանում. մշտադիտարկում, միտումներ և սպառնալիքներ» աշխատության մեջ վկայակոչում են Հռոմի 1996 թ. Համաշխարհային պարենային համաժողովի հետևյալ ձևակերպումը. «Պարենային անվտանգությունը առկա է, երբ բոլոր մարդիկ ցանկացած ժամանակ ունեն բավարար քանակությամբ ու անվտանգ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիություն»[10]:

Գիտնականների մեծ մասը որպես պարենային անվտանգության ապահովման հիմք ընդունում են երկրի գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության զարգացման մակարդակը: Մինչդեռ, ակադեմիկոս Էլմիրա Կրիլատիխը առաջարկում է պարենային անվտանգության հայեցակարգային նոր մոտեցումներ: Մասնավորապես՝ դրանցից կարևորը պարենային անվտանգության էությունը որպես ագրոպարենային ոլորտի ինտեգրալային վեկտոր բացահայտելն է, որի սոցիալական, տնտեսական և բնապահպանական բաղադրիչները նպատակային ֆունկցիաներն են: «Թվարկված ֆունկցիաների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունն արտացոլելու համար մշակվել է ագրոպարենային ոլորտի տրամաբանական-գրաֆիկական մոդելը: Ի տարբերություն այլ հայեցակարգերի, որտեղ պարենային անվտանգության նպատակների ձեռքբերումը հիմնականում կապված է գյուղատնտեսության կամ ագրոարդյունաբերական համալիրի հետ, այս տարբերակում պարենային անվտանգության պահանջվող մակարդակի ձեռքբերումն ապահովող հիմնական համակարգը ցանկացած պետության բազմաֆունկցիոնալ սոցիալ-էկոլոգիական-տնտեսական ամբողջությունն է»[11]: Դրա ակնառու օրինակը Սինգա-

---

[7] Экономическая безопасность России: Общий курс: учебник / Под ред. В.К. Сенчагова. 2-е изд., М.: Дело, 2005, с. 24.

[8] **Серова Е.В.**, Аграрная экономика. М.: ГУ ВШЭ, 1999, с. 224.

[9] **Назаренко В.И.**, Продовольственная безопасность (в мире и в России). М.: Памятники исторической мысли, 2011, с. 6.

[10] **Шагайда Н.И., Узун В.Я.**, Продовольственная безопасность в России: мониторинг, тенденции и угрозы. М.: Издательский дом Дело. РАНХиГС, 2015, с. 5.

[11] **Крылатых Э.Н.,** Концепции и методологические основы изучения продовольственной безопасности, https://cyberleninka.ru/article/n/kontseptsii-i-metodologicheskie-osnovy-izucheniya-prodovolstvennoy-bezopasnosti/viewer

պուրն է, որը չունի գյուղատնտեսություն, բայց պարենային անվտանգության համաթվով աշխարհում առաջնակարգ տեղ է զբաղեցնում:

Հայաստանում պարենային անվտանգության հիմնախնդիրներին անդրադարձել են տնտեսագետներ Ն. Մանասերյանը[12], Ա. Մարկոսյանը[13], Կ. Գրիգորյանը[14], Ս. Ավետիսյանը[15], Բ. Չախմախչյանը[16], Վ. Մկրտչյանը[17], Կ. Հարությունյանը [18] և ուրիշներ: Պարենային անվտանգության հասկացության պաշտոնապես ընդունված սահմանումը հետևյալն է. «Պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ առողջության համար անվտանգ, լիարժեք պարենով ապահովմանը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածների, և կարող է սպառվել նրանց կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ»[19]:

Հայաստանում պարենային անվտանգության մակարդակի բարձրացման հարցերը սերտորեն կապված են ագրոպարենային ոլորտի արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման և հողային բարեփոխումների շարունակական բարելավման հետ: Մասնավորապես՝ դա վերաբերում է գյուղացիական տնտեսությունների հողատարածության խոշորացմանը և մասնատված փոքր հողակտորների միավորմանը: Բացի այդ, խիստ հրատապ են ոռոգման ջրախնայողական՝ կաթիլային և անձրևացման եղանակների ներդրումը, ներտնտեսային ցանցի փակ համակարգին անցումը և տեղային մելիորացիայի իրականացումը: Ներկայումս նշված գործողությունները հաջողությամբ իրականացվում են պետական աջակցության ծրագրերով ինտենսիվ այգիներ և հատապտղանոցներ հիմնելիս:

Վրաստանում պարենային անվտանգության հարցերին անդրադարձել են տնտեսագետներ Ս. Ասաթիանին[20], Ն. Ջաբանիձեն[21], Դ. Կաթամաձեն[22],

---

[12] Տե՛ս **Մանասերյան Ն.,** Ագրարային հարցը երեկ և այսօր, Եր., «Տնտեսագետ», 2005, 266 էջ:

[13] Տե՛ս **Մարկոսյան Ա.**, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005, 250 էջ:

[14] Տե՛ս **Գրիգորյան Կ.,** Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., ՀՊԱՀ, 2011, 250 էջ:

[15] Տե՛ս **Ավետիսյան Ս.,** Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ, «Ամբերդ» մատենաշար, Եր., «Տնտեսագետ», 2014, 96 էջ:

[16] Տե՛ս **Չախմախչյան Բ., Մանուկյան Մ., Մկրտչյան Հ.,** Պարենային շուկայի հիմնախնդիրները և զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, 98 էջ:

[17] Տե՛ս **Չախմախչյան Բ., Մկրտչյան Հ.,** Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների շուրջ, http://www.noravank.am › upload › pdf

[18] Տե՛ս **Հարությունյան Կ.** և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, Եր., «Տնտեսագետ», 2021, 178 էջ:

[19] https://www.mineconomy.am/page/1333

[20] Տե՛ս **Asatiani Salome** (2009), Food security concept, condition and trends in Georgia, IBSU Scientific Journal (IBSUSJ), ISSN 1512-3731, International Black Sea University, Tbilisi, Vol. 3, Iss. 2, էջ 35-54:

[21] Տե՛ս **Meskhidze I., Tsetskhladze L., Jabnidze N.,** (2021), Food security problems for developing countries in the conditions of COVID-19: case of Georgia, Vol. 5, No. 2, Economics. Ecology. Socium, էջ 5-17:

[22] Տե՛ս **Katamadze Davit** (2022), Problems of Food Security in the Conditions of the Open Economy of Modern Georgia. International Journal of Innovative Technologies in Economy, 4(40), file:///C:/Users/Amberd/Downloads/2403-Article%20Text-4994-1-10-20221231.pdf

Գ. Աբուսելիձեն, Գ. Կաթամաձեն[23], Տ. Քավթարաձեն, Ռ. Աբասաձեն, Վ. Բուրդուլին և ուրիշներ:

Մասնավորապես՝ Ռ. Աբասաձեն և Վ. Բուրուդլին «Տնտեսական զարգացման կառուցվածքային և նորամուծական հիմնախնդիրները» աշխատությունում, հանգամանորեն վերլուծելով 21-րդ դարի սկզբին Վրաստանի գյուղատնտեսության ցուցանիշների անկումը, նշում են. «Եթե անկումը տեղի է ունեցել որոշակի տարիներին, ապա դա կարող է վերագրվել եղանակային անբարենպաստ պայմաններին: Բայց քանի որ անկումը նկատվել է մի քանի տարի շարունակաբար (այդ ընթացքում Ադրբեջանում և Հայաստանում, որոնք գտնվում են մոտավորապես նույն կլիմայական պայմաններում, արձանագրվել է գյուղատնտեսական արտադրանքի շարունակական աճ), կարող ենք եզրակացնել, որ Վրաստանում 2006 թ-ից եղել է ագրարային ճգնաժամ, որն ունի համակարգային բնույթ: Որո՞նք են այս ճգնաժամի տնտեսական և ինստիտուցիոնալ պատճառները ...: Կան ներքին և արտաքին տնտեսական հանգամանքներ, որոնք հանգեցրել են ընդգծված ագրարային ճգնաժամի բռնկման՝ պատճառ դառնալով գյուղատնտեսական արտադրանքի մշտական նվազման»[24]: Դրանից շուրջ մեկ տասնամյակ անց՝ 2022 թ., «Պարենային անվտանգության հիմնախնդիրները Վրաստանում» աշխատության մեջ նշվում է. «Վրաստանը վաղուց հետ է մնացել պարենային անվտանգության սահմանից: Մեկ շնչին բաժին ընկնող հիմնական գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը տարեցտարի նվազում է, մինչդեռ ներմուծումն ավելանում է, ինչը փաստում է, որ երկրի պարենային անվտանգությունը վտանգված է»[25]:

Այսպիսով՝ Վրաստանի պարենային անվտանգության վերաբերյալ վրացի և օտարերկրյա գիտնականների կողմից մինչ այժմ կատարված ուսումնասիրությունների վերլուծությունից պարզվում է, որ Վրաստանի գյուղատնտեսական արտադրության ոլորտում առկա ռեսուրսները թույլ են տալիս ապացուցել, որ Վրաստանն ունի երկրի բնակչությանը սննդամթերք և սննդային ապրանքներ ապահովելու բավարար ներուժ:

Ադրբեջանում պարենային անվտանգության հարցերի տեղական հետազոտողներից կարելի է նշել Է. Ա. Գուլիևի[26], Ա. Ֆ. Աբասովի[27], Բ. Խ. Ատաշո-

---

[23] Տե՛ս **Abuselidze George, Katamadze Guliko,** Problem of Agribusiness Management in Georgia, https://www.proquest.com/openview/09e694dd29fec5bfbd94d8d19ad2d509/1?pq-origsite=gscholar&cbl=1536338

[24] **Абесадзе Р., Бурдули В.,** Структурные и инновационные проблемы экономического развития. Тбилиси, Изд. Института экономики П. Гугушвили ТГУ им. И. Джавахишвили, 2014, էջ 210, http://pgie.tsu.ge/contentimage/sxvadasxva/Abesadze_Burduli.pdf

[25] https://www.researchgate.net/publication/258725353_Food_Security_Policy_in_Georgia

[26] Տե՛ս **Гулиев Э.А. оглы**, Современные реалии и тенденции глобальной продовольственной безопасности // Российское предпринимательство, Том 19, № 7, 2018, էջ 1963-1978. doi: 10.18334/rp.19.7.39244

[27] Տե՛ս **Аббасов А.Ф.,** Безопасность пищевых продуктов. Баку, 2007, 602 էջ:

վի[28], Ռ. Ն. Սուլթանովայի[29] և այլոց աշխատությունները[30]:

Նշված հետազոտողների ուսումնասիրությունները գերազանցապես նվիրված են պարենային անվտանգության առանցքային հարցերին՝ ֆիզիկական և տնտեսական մատչելիությանը, սննդամթերքի անվտանգությանը և հիմնական պարենային ապրանքների ինքնաբավությանը: Իհարկե, այդ հարցերի համատեքստում անդրադարձ է կատարվել ագրոպարենային համալիրի զարգացման հիմնախնդիրներին, հատկապես՝ աշխատանքային ռեսուրսների, բնական և նյութատեխնիկական ներուժի արդյունավետ օգտագործմանը:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է ընդհանուր փիլիսոփայական և հետազոտական հատուկ մեթոդների վրա, ներառյալ՝ մակածության (ինդուկցիա) և արտածության (դեդուկցիա), վերլուծության և համադրության, գիտական վերացարկման, համեմատական վերլուծության մեթոդները: Սոցիալական և տնտեսական գործընթացներն ունեն և՛ որակական, և՛ քանակական չափումներ, որից ելնելով օգտագործվել են նաև վիճակագրական մեթոդներ, ինչպիսիք են դիտարկումը, համակցումը, խմբավորումը, ընտրությունը, միջինը և այլն: Տնտեսական և վիճակագրական վերլուծության մեջ հատկապես կարևոր է տնտեսական գործընթացների մակարդակի, փոխկապակցվածության և դինամիկայի ուսումնասիրությունը: Այդ նպատակով օգտագործվում են դինամիկ տնտեսական շարքեր: Սույն հետազոտության մեջ կիրառվում է նաև փորձագիտական գնահատման մեթոդը: Պետք է նշել, որ պարենային անվտանգության հիմնահարցերի հետազոտության մեթոդաբանությունը տարեցտարի կատարելագործվում է: Դա պայմանավորված է այս ոլորտում տեղի ունեցող առաջընթացով և միջազգային պրակտիկայում նոր ձեռքբերումներով: Բանն այն է, որ պարենային անվտանգության հիմնական հասկացությունները որոշակի փոփոխություններ են կրում միջազգային շուկայում ի հայտ եկող նոր երևույթների հետ կապված: Ուստի, քննարկվող խնդրի հիմնական հասկացությունները, ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը մշակվում և ընդունվում է ՄԱԿ-ի համապատասխան կազմակերպությունների գագաթնաժողովներում[31]: Միջազգային մակարդակում պարենային անվտանգության ցուցանիշների գնահատման համակարգը մշակվել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության՝ FAO-ի կողմից:

---

[28] Տե՛ս **Аташов Б.Х.,** Актуальные проблемы продовольственной безопасности. Баку, «Элм», 2005, 336 էջ:

[29] Տե՛ս **Султанова Р.Н.,** Формирование потребительского рынка в Азербайджанской Республике как фактор обеспечения продовольственной безопасности, https://1economic.ru/gr/epp-papers/110358.pdf

[30] Տե՛ս **Аташов Б.Х.,** Структурные проблемы и проблемы эффективности в аграрном сект.-1898 Journal of Economics, Entrepreneurship and Law №6, 2020 (June) tore. Баку, «Кооперация», 2017, 536 էջ: **Ахмедов Н.Х.,** Формирование рынка потребительских товаров в Азербайджане и проблемы развития. Баку, «Наука», 2014, 332 էջ:

[31] **Беликова М.П., Богданова М.В.,** Методика и система показателей комплексного информационно-статистического анализа продовольственной безопасности, https://cyberleninka.ru/article/n/metodika-i-sistema-pokazateley-kompleksnogo-informatsionno-statisticheskogo-analiza-prodovolstvennoy-bezopasnosti

Հայաստանում ցուցանիշների համակարգը ամրագրված է «Պարենային անվտանգության ապահովման մասին»[32] (05.07.2002 թ.) և «Սննդամթերքի անվտանգության մասին»[33] (27.11.2006 թ.) Հայաստանի Հանրապետության օրենքներում, ինչպես նաև ոլորտային ռազմավարություններում: Նույն տրամաբանությամբ համանման իրավական ակտեր են ընդունվել նաև հարևան հանրապետություններում: Տվյալ դեպքում որպես միասնական առանցք դիտարկվել են գյուղատնտեսության և պարենի ոլորտի միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ երկրների միջխորհրդային վեհաժողովի ընդունած տիպային օրենքները և ԵԱՏՄ նորմատիվային փաստաթղթերը:

Ուսումնասիրության տեսական հիմքը գյուղատնտեսական շուկաների և պարենային անվտանգության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններն են:

Օգտագործվել են նաև համապատասխան երկրների վիճակագրական տվյալների բազան, տնտեսագիտական ուղղվածության կիրառական և տեսական հետազոտությունների արդյունքներն ու եզրակացությունները:

Ներկայումս առավել լայն կիրառություն ունի Պարենային անվտանգության տեղեկատվական-վիճակագրական հետազոտության համալիր մեթոդաբանությունը: Վերջինս բաղկացած է շուրջ 130 ցուցանիշների համախմբից, որոնք բաժանվում են երեք խմբի: Առաջին շրջանակը ներառում է 3 հիմնական ենթախմբեր՝ պարենային ապրանքների սպառման ոլորտի նպատակային (2), բնակչության համար սննդամթերքի ֆիզիկական մատչելիության (1) և երկրի պարենային անկախության ոլորտը բնութագրող (1) ցուցանիշներ:

Երկրորդ շրջանակը բաղկացած է սպառման ոլորտի մշտադիտարկման (21), գյուղատնտեսական ապրանքների, ձկնամթերքների և պարենի ապրանքաշրջանառության ոլորտի (27), գյուղատնտեսության արտադրության և ձկնամթերքի (31), պաշարների և պահուստների վիճակի (4), բնակչության և աշխատանքային ռեսուրսների (9) մասնավոր ցուցանիշներից:

Երրորդ շրջանակը ներկայացված է պարենային անվտանգության կանխատեսվող սցենարի պայմանների ապահովումը բնութագրող (18), ոլորտային մակրոտնտեսական (3) և պարենային հաշվեկշռի (12) մասնավոր ցուցանիշներով:

Հետազոտության նպատակն է սահմանել և ուսումնասիրել պարենային անվտանգության մակարդակի բարձրացման ոլորտում պետական քաղաքականության հեռանկարային ուղղությունները՝ համատեղելով շուկայական հարաբերություններում «ողջամիտ միջամտության» և պարենային շուկայի պաշտպանության սկզբունքները:

Վերլուծություն: Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, պարենային ապրանքների ինքնաբավության պատկերը որոշակի նմանություն ունի: Այս երկրները բանջարաբոստանային ապրանքներով, մրգով և ոչխարի մսով ոչ միայն ինքնաբավ են, այլև ունեն արտահանման զգալի ներուժ, իսկ ցորենի, բուսական յուղի, թռչնամսի և ցիտրուսային մրգերի առումով նկատելի կախվածություն ունեն ներկրումից:

[32] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113
[33] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74494

Որպես կանոն, գոյություն ունի երկրի պարենային ապահովության բավարարման երեք հիմնական տարբերակ: Առաջինը և համեմատաբար հազվադեպ հանդիպողն այն է, երբ երկիրը բոլոր պարենային ապրանքներով ինքնաբավ է: Երկրորդ տարբերակի դեպքում երկրի պարենային ապահովումը հիմնականում կախված է արտաքին շուկայից: Երրորդ՝ ամենատարածված տարբերակը հիմնվում է երկրի համեմատական առավելությունների վրա, երբ, ըստ տնտեսական նպատակահարմարության, արտահանում և ներմուծում է պարենային ապրանքներ: Այդուհանդերձ, ցանկացած տարբերակի դեպքում երկրի տնտեսական անվտանգության շահերը պահանջում են սահմանել առանցքային կարևորություն ունեցող պարենային ապրանքների ինքնաբավության շեմային մակարդակ և ստեղծել ռազմավարական ապրանքների փոխանցվող կամ անձեռնմխելի պաշարներ:

Հարավային Կովկասի երկրներին բնորոշ է պարենային անվտանգության երրորդ տարբերակը: Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, Հայաստանը և Ադրբեջանը ինքնաբավության բարձր մակարդակ ունեն կարտոֆիլից, մրգերից և հատապտուղներից, խաղողից, բանջարաբոստանային արտադրանքներից, ոչխարի և այծի մսից: Վրաստանում, բացառությամբ բանջարաբոստանայինի, թվարկված մյուս արտադրանքների ինքնաբավության մակարդակը նույնպես բարձր է: Ըստ երկրների պարենային անվտանգության վիճակը նպատակահարմար է վերլուծել առանձին:

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի պարենային անվտանգության մակարդակը գնահատելու հիմնական ցուցանիշներից մեկը պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակն է: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2015 թվականի համեմատությամբ 2020 և 2021 թվականներին Հայաստանն ապահովել է ինքնաբավության բարձր մակարդակ առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների գծով (բացառությամբ ցորենի, բուսական յուղի, թռչնամսի և շաքարի): Մի շարք ապրանքների տեղական պահանջարկը բավարարելուց հետո մնացած քանակությունն արտահանվում է:

Այդպիսի ապրանքներից են ձուկը, բանջարեղենը, մրգերը և հատապտուղները, ձուն ու կարտոֆիլը: Որոշ այլ ապրանքների մասով Հայաստանը մասամբ ինքնաբավ է, ինչը նշանակում է, որ տեղական արտադրանքը բավարար է ներքին պահանջարկի միայն մի մասն ապահովելու համար, իսկ մնացած քանակությունը ներմուծվում է: Այդ մթերքներից են տավարի միսը, կաթը և խոզի միսը: Ինչ վերաբերում է առաջին անհրաժեշտության մնացած պարենային ապրանքներին, ապա Հայաստանը ինքնաբավ չէ և մեծապես կախված է ներմուծումից:

Ահավասիկ՝ 2019–2021 թթ. միջին տվյալներով ցորենի, բուսական յուղի, թռչնամսի և շաքարի տեղական արտադրության ծավալը ընդամենը սննդի նպատակով սպառման տարեկան ծավալում կազմում է. ցորենը՝ 30%, բուսական յուղը՝ 1,02%, թռչնի միսը՝ 24,5% և շաքարը 51,0% (աղյուսակ 2): Ինչպես նկատում ենք, ինքնաբավության ամենափոքր ցուցանիշն ունի բուսական յուղը, և այդ բացը լրացնելու տեղական հնարավորությունները խիստ սահմանափակ են: Ինչ վերաբերում է թռչնամսին, ապա այս արտադրանքի տեղա-

կան արտադրության ավելացման հնարավորություններ կան, սակայն տնտեսական արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար չէ դրանց կիրառումը, քանի որ ծախսերը մեծանում են և ներմուծված արտադրանքի համեմատությամբ մրցունակությունը թույլ է: Որոշակի անորոշություն կա շաքարի առումով: ՀՀ-ում միակ՝ Ախուրյանի շաքարի գործարանը շատ փոքր ծանրաբեռնվածությամբ է աշխատում, և հումքն ամբողջովին ներմուծվում է արտերկրից:

Աղյուսակ 1

Պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակը Հարավային Կովկասի երկրներում, %*

Պարենային ապրանքներ	2015 թ.			2020 թ.			2021 թ.		
	Հայ.	Ադրբ.	Վրաստ.	Հայ.	Ադրբ.	Վրաստ.	Հայ.	Ադրբ.	Վրաստ.
ցորեն	49,5	54.8	17	24,4	57,1	15	23,2	61.5	22
կարտոֆիլ	102,1	89,1	89	101,1	90,6	92	111,7	88,8	115
բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	100,3	103,4	66	103,9	110,4	63	105,6	106,6	61
մրգեր և հատապտուղներ	102,1	113,7	99	98,2	116,3	102	114,4	122,9	124
խաղող	101,2	93,1	122	108,0	95,8	145	106,7	94,4	173
տավարի միս	92,3	91,8	79	87,3	87,4	80	92,2	91,9	83
ոչխարի և այծի միս	107,7	99,3	95	100,4	97,3	97	100,4	98,2	105
խոզի միս	57,8	17,8	49	45,1	4,7	53	53,2	4,8	52
թռչնի միս	21,8	98,6	31	23,9	79	33	26,7	79,6	37
կաթ	93,0	84,3	87	82,0	83,5	81,0	87,7	84,8	81,0
ձու	99,5	99,7	102,0	100,3	100,0	97,0	98,8	99,1	98,0

* *Աղյուսակը կազմել են հեղինակները Հայաստանի (https://www.armstat.am/am/?nid=82&id=2569), Ադրբեջանի (https://www.stat.gov.az/source/food_balances/?lang=en) և Վրաստանի (https://www.geostat.ge/en/modules/categories/297/food-security) վիճակագրական ծառայությունների կայքերի տվյալներով:*

Քանի որ թվարկված երկու արտադրանքների սպառման ծավալները մեծ չեն, իսկ շաքարի ֆիզիկական մատչելիությունը խնդրահարույց է, անդրադառնանք առավելապես գլխավոր սննդամթերքին, այսինքն՝ պարենային ցորենին:

Հայաստանը, գնահատելով մրցակցային առավելությունները, պետք է հնարավորինս ավելացնի սեփական արտադրության հացահատիկի և մյուս հիմնական պարենային ապրանքների ծավալը: Որպեսզի այս կարծիքը մերկապարանոց չհնչի, նշենք, որ, օրինակ՝ հացահատիկի արտադրության համար հողային և ջրային ռեսուրսները հիմնականում բավարար են: Բայց, դրա հետ մեկտեղ, չունենք բարձր բերքատու սորտերի սերմնաբուծություն, մշակության արդիական տեխնոլոգիաներ, բարձր արտադրողական կոմբայններ և հետբերքահավաքային գործընթացներն անկորուստ ու արդյունավետ կերպով իրականացնելու ենթակառուցվածքներ: Վերջին տարիներին արտոնյալ վարկավորման, հեկտարի հաշվով ուղղակի աջակցության, ապահովագրավճարի, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի գների մասնակի սուբսիդավորման և այլ ուղիներով պետական օժանդակության ծրագրերի իրա-

կանացումը նպատակ է հետապնդում բարձրացնելու գյուղատնտեսների շահագրգռվածությունը, սակայն հացահատիկի մշակության տարածությունը աստիճանաբար կրճատվում է: Այս երևույթի գլխավոր պատճառը փոքր հողակտորների վրա մշակվող հացահատիկային մշակաբույսերի ցածր եկամտաբերությունն է:

Աղյուսակ 2

ՀՀ-ում հիմնական պարենային ապրանքների արտադրությունը, ներմուծումը և սննդի սպառումը 2019–2021 թթ., հազ. տոննա*

Պարեն	2019			2020			2021		
	արտադրություն	ներմուծում	սննդի սպառում	արտադրություն	ներմուծում	սննդի սպառում	արտադրություն	ներմուծում	սննդի սպառում
ցորեն	112,6	325,6	392,3	132,0	426,9	385,6	97,2	330,4	362,5
կարտոֆիլ	404,1	12,5	190,0	437,2	10,6	179,6	364,6	15,3	184,2
բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	749,5	48,9	524,1	819,4	54,6	541,9	751,4	62,5	527,4
միրգ և հատապտուղ	290,6	90,6	269,7	274,3	103,7	261,8	323,0	105,5	258,1
բուսական յուղ	0,4	28,7	28,4	0,3	31,4	30,8	0,2	27,7	28,6
շաքար	60,0	25,2	76,4	28,8	50,7	75,0	23,3	53,1	68,3
ձու	39,6	0,0	37,6	41,5	0,1	39,1	39,1	0,5	37,4
կաթ	667,9	146,1	711,5	654,3	171,1	715,1	670,7	125,7	691,4
տավարի միս	68,1	7,6	74,2	68,6	10,7	77,4	69,4	6,5	74,8
խոզի միս	16,1	13,3	28,8	15,7	19,5	34,3	15,8	14,3	29,5
ոչխարի և այծի միս	10,7	0,0	9,2	10,8	0,0	10,6	10,8	0,0	10,7
թռչնի միս	12,4	44,9	54,5	12,6	40,3	52,5	14,6	40,4	54,5
ձուկ	18,3	3,7	14,7	19,1	4,8	12,2	19,7	5,4	12,8
խաղող	217,5	8,2	11,5	283,1	4,4	12,5	237,1	3,3	12,1

* *Աղյուսակը կազմել են հեղինակները ՀՀ ՎԿ պարենային ապահովության և աղքատության 2023 թ. հունվար-մարտ ամիսների հրապարակման փվյալներով:*

Շիրակի մարզում 2022 թվականի աշնանը 17.500 հա ցորեն է ցանվել: 1 հա ցորենի մշակության համար գյուղացին միջինը ծախսում է 200.000–250.000 դրամ. եթե կիլոգրամը 70 դրամով վաճառի ստացած բերքը, ապա 1 հա-ից պետք է 3 ու կես տոննայից ավելի հացահատիկ ստանա, որ գոնե միայն իր ծախսերը փակի: Իսկ եթե հաշվի առնենք պետական աջակցության գումարը, որը փոքր-ինչ թեթևացրեց գյուղացու ծախսերը, ապա այս դեպքում առնվազն 2 ու կես տոննա բերքով ծախսերը կփակվեն: Բայց գյուղերում բերքատվությունը շատ ցածր է, շատերը հեկտարից 2 տոննայից էլ պակաս բերք են ստանում և զրոյական վիճակի էլ չեն հասնում: Իսկ վարկերը փակելուն արդեն գումար չի մնում[34]: Ավելին, եթե նկատի ունենանք, որ

[34] Ցորենի մթերման գինն աննախադեպ ցածր է. 65 դրամ, https://galatv.am/hy/3232070/

2022 թ. դեկտեմբերին շինարարության ոլորտում միջին անվանական աշխատավարձը կազմել է 248195 դրամ[35], ապա դժվար չէ հաշվարկել, որ մեկ հեկտար աշնանացան ցորեն մշակողի տարեկան հասույթը պակաս է այդ ոլորտում զբաղվածի մեկ ամսվա, իսկ զուտ եկամուտը՝ կես ամսվա աշխատավարձից: Ահա հիմնական պատճառներից մեկը, որ վարելահողերի կեսից ավելին չի մշակվում:

Գաղտնիք չէ, որ հացահատիկի արտադրությամբ է պայմանավորված ոչ միայն հացի, այլ նաև անասնակերի, մասնավորապես՝ թռչնաբուծության զարգացման խնդիրը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է բազմազանեցնել հացահատիկի մշակության ոլորտը: Առաջարկվում է փորձարկել կերի սորգոյի մշակությունը, որը մեր բնակլիմայական ու հողային պայմաններին մոտ երկրներում բավականին լավ արդյունք է ապահովում: Բուսական յուղի ստացման համար նպատակահարմար է զարգացնել սոյայի մշակությունը: Աբովյանի տեխնիկական մշակաբույսերի կայանում, Էջմիածնի երկրագործության գիտական կենտրոնում և Գյումրիի սելեկցիոն կայանում ստացված սոյայի տեղական սորտերի փորձարկումը ցույց է տվել, որ բերքատվության և յուղայնության առումով դրանք չեն զիջում լայն տարածում գտած սորտերին: Ուստի, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ու հնարավորինս խթանել նշված մշակաբույսերի մշակությունը:

Վրաստանի Հանրապետություն

Վրաստանում հողային ռեսուրսները սահմանափակ են: Գյուղատնտեսական օգտագործելի հողերը կազմում են երկրի տարածքի ընդամենը 15%-ը, 70%-ը անտառներ, թփուտներ, մարգագետիններ ու արոտավայրեր են: Գերարածեցումը, անտառների անկայուն կառավարումը, անտառածածկույթի կորուստը և չպլանավորված քաղաքաշինությունը Վրաստանում հողերի դեգրադացիայի հիմնական գործոններն են:

Ինչպես Հայաստանում, Վրաստանում նույնպես գյուղատնտեսության բնականոն զարգացմանը խոչընդոտում են տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսական հողերի մասնատվածությունը: Այսպես՝ 2021 թ. տվյալներով տնային տնտեսությունների գրեթե 80%-ն ունի մեկ հեկտարից պակաս գյուղատնտեսական հող, 4,3%-ը՝ 1–2 հա, և միայն 1,3%-ը (8577 տնային տնտեսություն)՝ 5 և ավելի հեկտար գյուղատնտեսական հողատարածք: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունը Վրաստանի տնտեսության կարևոր ոլորտներից է և կազմում է համախառն ներքին արդյունքի 8%-ը[36]:

COVID-19 համավարակի հետևանքները դեռևս ամբողջովին չհաղթահարված՝ ռուս-ուկրաինական պատերազմը և պարենի միջազգային գների աննախադեպ բարձրացումը, ինչպես նաև լոգիստիկ խնդիրները նոր մարտահրավերներ են ստեղծել սննդի մատակարարման շղթաների գործունեության համար: Որպես սննդամթերքի համաշխարհային արժեքային շղթաների մաս՝ Վրաստանը նույնպես դժվարությունների է հանդիպում՝ կապված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, պահպանման, ներմուծման և վաճառքի հետ: Ավելին, Վրաստանը մեծապես կախված է սննդամթերքի

[35] Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_22a_142.pdf

[36] Տե՛ս Аграрный сектор Грузии не использует все возможности для роста, https://east-fruit.com/novosti/agrarnyy-sektor-gruzii-ne-ispolzuet-vse-vozmozhnosti-dlya-rosta-vb/

մեծ մասի ներմուծումից (2022 թվականին ցորենի 78%-ը և բուսական յուղի 77%-ը ներմուծվել են Ռուսաստանից): Ուստի կառավարությունը ծրագրեր է իրականացնում մի կողմից՝ հիմնական պարենային արտադրանքների տեղական արտադրության ավելացման, մյուս կողմից՝ ներմուծումը կանոնակարգելու համար: Ինչպես երևում է աղյուսակ 3-ի տվյալներից, 2020–2022 թթ. նկատելիորեն ավելացել են ցորենի արտադրության ծավալները, սակայն եգիպտացորենի և կարտոֆիլի արտադրությունը պակասել է:

Աղյուսակ 3

Ցորենի, եգիպտացորենի և կարտոֆիլի արտադրությունը Վրաստանում 2020–2022 թթ.*

Տարեթիվ	Ցորեն			Եգիպտացորեն			Կարտոֆիլ		
	Բերքահավաքի կտրուածքը (հազ. կա)	Միջին բերքատվություն (ց/կա)	Հավաքատեսակ արտադրանքը (հազ. տոն)	Բերքահավաքի տարածքը (հազ. կա)	Միջին բերքատվություն (ց/կա)	Հավաքատեսակ արտադրանքը (հազ. տոն)	Բերքահավաքի տարածքը (հազ. կա)	Միջին բերքատվություն (ց/կա)	Հավաքատեսակ արտադրանքը (հազ. տոն)
2020	46.5	2.2	102.3	81.1	3.1	251.4	15.7	13.1	205.7
2021	50.3	2.7	135.8	76.4	3.0	229.2	16.2	14.3	231.0
2022	55.3	2.9	160.4	73.9	2.0	147.8	16.9	11.6	196.0
2020–2022 միջինը	50.7	2.6	131.8	231.4	2.7	628.4	16.3	12.9	210.3

* *Հաշվարկները կատարել են հեղինակները https://www.geostat.ge/en/modules/categories/297/food-security կայքէջի տվյալների հիման վրա:*

Վերոհիշյալ բացասական գործոնների ազդեցությունը նվազեցնելու և սննդամթերքի գները կայուն պահելու նպատակով պետությունը սուբսիդավորել է ինը պարենային ապրանքների (մակարոնեղեն, հնդկաձավար, բուսական յուղ, շաքարավազ, ցորեն, ցորենի ալյուր, կաթի փոշի) ներմուծումը: Բացի այդ, պահեստավորվել են շաքարավազի, բուսական յուղի և մակարոնեղենի լրացուցիչ պաշարներ:

Ցորենի ինքնաբավության ցուցանիշը Վրաստանում ավելի ցածր է, քան Հայաստանում և Ադրբեջանում: Վրաստանին տարեկան պետք է մոտ 800.000 տոննա հացահատիկ. տեղական արտադրությունը, սովորաբար, կազմում է մինչև 150.000 տոննա, իսկ առավելագույն ծավալը կարող է հասնել 200.000 տոննայի:

Այն բանից հետո, երբ 2021 թվականի ամառվանից միջազգային շուկաներում ցորենի գինը սկսեց աճել, և Ռուսաստանը կիրառեց հացահատիկի արտահանման լողացող մաքսատուրք, Վրաստանը նվազեցրեց ցորենի ներմուծման ծավալը (2021 թ.՝ 30%-ով) և ավելացրեց ալյուրի ծավալը[37]:

Վրաստանում ցորենի արտադրանքի հաշվեկշռի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական արտադրության ծավալն ավելանալու միտում ունի, սակայն 2022 թ. ապահովվել է սննդի նպատակով սպառման մոտ 27 տոկոսը

[37] Տե՛ս https://sputnik-georgia.ru/20230103/produkt-nomer-odin-ili-kak-obespechit-prodovolstvennuyu-bezopasnost-v-gruzii-267705638.html

միայն: Մինչդեռ, ուսումնասիրվող տարիներին սննդի նպատակով սպառվող ցորենի գերակշռող մասը բավարարվել է ներմուծման հաշվին (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Վրաստանում ցորենի արտադրանքի հաշվեկշիռը

	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Տեղական արտադրություն	48	126	127	98	107	101	102	136	157
Ներմուծում	663	649	556	593	660	597	570	482	557
Սերմ	14	15	14	13	12	12	13	14	15
Անասնակեր	26	23	20	19	22	21	20	18	21
Մշակում (ալկոհոլի մեջ)	5	5	5	5	5	5	4	4	4
Սնունդ	640	635	623	645	642	638	643	624	585
Թափոններ	13	15	13	13	15	14	13	12	14
Արտահանում	42	12	18	49	25	6	0	5	5
Բնակչություն (հազ. մարդ)	3 722	3 729	3 726	3 730	3 723	3 717	3 729	3 689	3 736
Սպառում (կգ/տարի)	129	128	126	130	130	129	130	127	118
գրամ/օր	354	351	344	356	355	354	355	349	323

Աղբյուրը՝ https://www.geostat.ge/en/modules/categories/297/food-security

2023 թ. ակնկալվում է, որ հացահատիկի բերքը կհասնի 155 հազար տոննայի, սակայն ինչպես Հայաստանում, այստեղ նույնպես ցորենի իրացումը խիստ դժվարացել է, քանի որ գյուղացիները չեն կարողացել ամբողջությամբ իրացնել նախորդ տարվա բերքի զգալի մասը, դրսից համեմատաբար էժան գնով ներկրումներն ավելանում են[38]:

Վրաստանի ռազմավարական նշանակությունը Հայաստանի համար զգալի է և կշարունակի մնալ այդպիսին նաև որպես պատուհան դեպի Եվրոպա: Ներկայումս երկկողմ համագործակցության շրջանակն ընդգրկում է Հայաստանի համեմատաբար մրցունակ ոլորտները, ինչպիսիք են առողջապահությունը, բարձր տեխնոլոգիաները և այլն: Դրանց հետ մեկտեղ, գյուղատնտեսության և ագրովերամշակող արդյունաբերության տարբեր ճյուղերում համագործակցության առկա ներուժն ու ռեսուրսները պետք է ընդլայնվեն և առավելագույնս օգտագործվեն: Այդպիսի համագործակցությունը էական հիմքեր կստեղծի զբոսաշրջության զարգացման և պարենային անվտանգության հիմնախնդիրների հաղթահարման համար:

Հայաստանը նույնպես կարող է մեծ նշանակություն ունենալ Վրաստանի համար. մեր երկիրը կարող է դառնալ Վրաստանը Իրանին և նրա միջոցով Մերձավոր Արևելքին կապող կարևոր ու արդյունավետ ճանապարհ: Սա կրկին մատնանշում է Հայաստանում համապատասխան ենթակառուցվածքների հետագա արդիականացման և զարգացման կարևորությունը[39]:

---

[38] Տե՛ս Реализация грузинской пшеницы связана с трудностями, https://bizzone.info/agriculture/2023/1692918901.php

[39] Տե՛ս Վրաստանն ու Հայաստանը կարող են մեկուսացնել Ադրբեջանին. Jamestown Foundation; https://www.civilnet.am/news/97047/%D5%BE%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%B8%D6%82,%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%

Ադրբեջանի Հանրապետություն

Ադրբեջանի կառավարության վարած քաղաքականությունը նպաստում է հանրապետության պարենային անվտանգության ամրապնդմանը: Ըստ 3-րդ և 4-րդ աղյուսակների ցուցանիշների՝ ինչպես բուսական, այնպես էլ կենդանական ծագման պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակը վերջին 7 տարիներին նկատելիորեն բարձրացել է: Այդուհանդերձ, հատկապես պարենային ցորենի ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է: Փորձագետների գնահատականներով՝ Ադրբեջանում ցորենի տարեկան պահանջարկը կազմում է 3,5 մլն տոննա, որի 40%-ը ապահովվում է ներմուծմամբ: 2022 թվականին ցորենի ներմուծման մեջ ամենամեծ բաժինը՝ 80%-ը, ունեցել է Ռուսաստանը: Ադրբեջանը տարեկան ներմուծում է ավելի քան 1 մլն տոննա ցորեն[40]:

Աղյուսակ 5

Բուսական ծագման մթերքների ինքնաբավության մակարդակը Ադրբեջանում, %*

	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ընդամենը հացահատիկ, բացի բրնձից	64.5	63.8	66.3	74.1	67.3	68,1	73.7
ցորեն	54.8	52.9	58.1	64.8	57.2	57,1	61.5
գարի	95.1	101.7	94.4	103.1	100.2	94,6	101.9
եգիպտացորեն	54.1	71.1	70.7	82.7	80.0	86,6	93.6
հնդկաձավար	93.1	85.7	90.1	89.2	90.9	86,6	88.5
այլ հացահատիկ	6.3	32.0	20.4	82.3	88.2	93,9	26.7
հատիկաընդեղեն	69.3	68.4	73.7	72.0	76.1	60,3	56.4
կարտոֆիլ	89.1	85.5	89.2	90.8	87.8	90,6	88.8
բանջարեղեն	103.4	105.4	115.2	115.0	112.0	110,4	106.6
լոլիկ	113.7	119.0	130.9	138.0	132.5	131,0	121.1
բոստանային	100.0	100.2	100.2	99.7	100.8	100,8	102.6
մրգեր և հատապտուղներ	113.7	116.4	122.4	123.2	123.1	116,3	122.9
ընկույզ և պնդուկ	132.5	141.9	152.9	130.0	138.2	138,0	136.5
նուռ	103.7	105.2	104.5	106.3	110.7	112,0	127.8
խաղող	93.1	89.2	93.4	92.5	94.3	95,8	94.4

* *Աղբյուրը՝ https://www.stat.gov.az/source/food_balances/?lang=en*

Պարենային ցորենի գների կտրուկ աճը նվազեցնելու համար Ադրբեջանը մեծացրել է ներքին շուկայում վաճառվող յուրաքանչյուր տոննա ցորենի և ալյուրի սուբսիդավորման չափը: Բացի այդ, ցորենի ներմուծումը, ցորենի ալյուրի և հացի արտադրությունն ու իրացումը ազատվել են ԱԱՀ-ից: Այս միջոցները կգործեն մինչև 2024 թվականը: Բացի այդ, Ադրբեջանի կենտրոնական բանկը հացահատիկի խոշոր ներկրողներին շատ ցածր տոկոսադրույքներով վարկեր է տրամադրում:

B6%D5%A8-%D5%AF%D5%A1%D6%80%D5%B8%D5%B2-%D5%A5%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%BD/

[40] Տե՛ս https://az.sputniknews.ru/20230104/chto-sdelalo-pravitelstvo-dlya-predotvrascheniya-goloda-v-azerbaydzhane-v-2023-godu--analiz-450338850.html

Աղյուսակ 6

Կենդանական ծագման մթերքների ինքնաբավության մակարդակը Ադրբեջանում, %*

Մթերքները	*2015*	*2016*	*2017*	*2018*	*2019*	*2020*	*2021*
Ընդամենը միս և մսամթերք	94.7	87.9	84.7	82.7	82.5	84,5	86.4
տավարի միս և մսամթերք	91.8	93.5	86.3	85.1	86.1	87,4	91.9
ոչխարի և այծի միս ու մսամթերք	99.3	98.7	98.0	98.1	97.6	97,3	98.2
խոզի միս և մսամթերք	17.8	7.0	5.6	5.5	5.3	4,7	4.8
թռչնի միս և մսամթերք	98.6	79.1	79.7	75.9	74.6	79,0	79.6
կաթ և կաթնամթերք	84.3	87.7	86.1	86.7	86.3	83,5	84.8
ձու	99.7	98.8	100.5	101.5	101.8	100,0	99.1
ձուկ և ձկնամթերք	77,6	82,3	81,2	83,1	82,2	81,7	78,2

* *Աղբյուրը՝ https://www.stat.gov.az/source/food_balances/?lang=en*

Պարենային անվտանգության կարևոր բաղադրիչ է նաև սննդի որակի պատշաճ վերահսկողության համակարգը: Ադրբեջանի պաշտոնական լրատվության և ագրարային ոլորտի մասնագետների հրապարակումները վկայում են, որ հանրապետության սննդի որակի վերահսկման համակարգը չունի բավարար որակյալ կադրեր: Որոշ ապրանքատեսակների ներմուծումը սեզոնային է, օրինակ՝ կարտոֆիլի ներմուծման զգալի մասը բաժին է ընկնում ձմռանը: Ներմուծվող էժան կարտոֆիլը, որի որակը այնքան էլ բարձր չէ, և գինը համեմատաբար ցածր է, հիմնականում սպառում են ցածր եկամուտ ունեցող քաղաքացիները:

Եզրակացություններ: Հարավային Կովկասի երկրների պարենային անվտանգության վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման, ինչպես նաև Թուրքիայի հետ քաղաքական հիմնախնդիրների հաղթահարման դեպքում նկատելիորեն կմեծանա տարածաշրջանի մրցունակությունը: Բոլոր հիմքերն առկա են՝ պնդելու, որ բուռն կերպով կզարգանա թեթև և սննդի արդյունաբերությունը, կարևոր ազդակ կլինի գյուղատնտեսության ոլորտի զարգացման և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: Իսկ առավել մոտ ապագայի համար կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալ հիմնախնդիրներին՝

1. Գյուղատնտեսական հողերի ոչ լիարժեք և նպատակային օգտագործման պայմաններում, հատկապես Վրաստանում և Հայաստանում, անթույլատրելիորեն ցածր է հացահատիկի, մասնավորապես՝ ցորենի ինքնաբավության մակարդակը:
2. Ներկայումս գրեթե անտեսված է հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության և սելեկցիայի հարցերով զբաղվող կառույցների գործունեությունը:
3. Թեև վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացել է գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցությունը, և այդ ծրագրերն ունեն հասցեական բնույթ, սակայն Հայաստանում և Վրաստանում սպասարկող ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակը և տնտեսությունների փոքր չափերը թույլ չեն տալիս հասնել լրացուցիչ ներդրումների բարձր արդյունավետության:
4. Նպատակահարմար է համալիր միջոցառումներ ձեռնարկել կաթնային և մսային անասնապահության զարգացման ուղղությամբ: Այս

առումով բավականին շահեկան է «սերմից մինչև պատառաքաղ» սկզբունքով տեխնոլոգիական շղթայի զարգացումը: Վերջինս կարող է բարձր արդյունավետություն ապահովել նաև Հարավային Կովկասի երեք երկրներում միասնական գործարար ծրագիր իրականացնելու դեպքում:

5. Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի և հետբերքահավաքային շրջանում դեռևս մեծ են կորուստները, որի հիմնական պատճառը ցածր արտադրողական և հնացած գյուղատնտեսական տեխնիկայի կիրառությունն է: Հարավային Կովկասում լեռնային մեքենաշինության զարգացման հիմնահարցը դեռևս օրակարգում է, ուստի այս խնդրի լուծումը խիստ արդիական է:

Օգտագործված գրականություն

1. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ, «Ամբերդ» մատենաշար, Եր., «Տնտեսագետ», 2014:
2. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Ա.Վ., Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը ՀՀ-ում, «Ամբերդ» մատենաշար, Եր., «Տնտեսագետ», 2015:
3. Գրիգորյան Կ. Ա., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղին ՀՀ-ում, Եր., ՀՊԱՀ, 2011:
4. Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, Եր., «Տնտեսագետ», 2021:
5. Չախմախչյան Բ., Մկրտչյան Հ., Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների շուրջ, http://www.noravank.am › upload › pdf
6. Պարենային շուկայի հիմնախնդիրները և զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում / Չախմախչյան Բ., Մանուկյան Մ., Մկրտչյան Հ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002:
7. Абесадзе Р., Бурдули В., Структурные и инновационные проблемы экономического развития. Тбилиси, Изд. Института экономики П. Гугушвили ТГУ им. И. Джавахишвили, 2014, http://pgie.tsu.ge/contentimage/sxvadasxva/Abesadze_Burduli.pdf
8. Аташов Б.Х., Актуальные проблемы продовольственной безопасности. Баку, «Элм», 2005.
9. Бородин А. И., Выгодчикова И. Ю., Дзюба Е. И., Панаедова Г. И., Продовольственная безопасность: меры финансовой господдержки устойчивого развития сельского хозяйства регионов России. Финансы: теория и практика, 25(2), 2021.
10. Гулиев Э.А. оглы, Современные реалии и тенденции глобальной продовольственной безопасности // Российское предпринимательство. Том № 7, 2018, 1963-1978. doi: 10.18334/rp.19.7.39244
11. Костяев, А.И. О необходимости новой парадигмы продовольственной безопасности России / А.И. Костяев, Г.Н. Никонова // Никоновские чтения.

12. Крылатых Э.Н., Концепции и методологические основы изучения продовольственной безопасности, https://cyberleninka.ru/article/n/kontseptsii-i-metodologicheskie-osnovy-izucheniya-prodovolstvennoy-bezopasnosti/viewer
13. Назаренко В.И., Продовольственная безопасность (в мире и в России). М.: Памятники исторической мысли, 2011.
14. Продовольственная безопасность и раскрытие агропромышленного потенциала Евразийского региона. Доклады и рабочие документы, 23/1, Алматы, 2023, https://eabr.org/upload/iblock/8b7/EDB_2023_Report-1_Food-Security_rus.pdf
15. Серова Е.В., Аграрная экономика. М.: ГУ ВШЭ, 1999.
16. Султанова Р.Н., Формирование потребительского рынка в Азербайджанской Республике как фактор обеспечения продовольственной безопасности, https://1economic.ru/gr/epp-papers/110358.pdf
17. Шагайда Н.И., Узун В.Я., Продовольственная безопасность в России: мониторинг, тенденции и угрозы. М.: Издательский дом «Дело», РАНХиГС, 2015.
18. Asatiani S. (2009), Food security concept, condition and trends in Georgia, IBSU Scientific Journal (IBSUSJ), ISSN 1512-3731, International Black Sea University, Tbilisi, Vol. 3, Iss. 2.
19. https://az.sputniknews.ru/20230104/chto-sdelalo-pravitelstvo-dlya-predotvrascheniya-goloda-v-azerbaydzhane-v-2023-godu-analiz-450338850.html
20. https://news.un.org/ru/story/2022/10/1433417
21. https://www.academia.edu/24471529/Armenia_Economic_Report_2015Armenian_Georgian_Economic_Cooperation?auto=download&email_work_card=download-paper
22. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113
23. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74494
24. https://www.interfax.ru/world/902955
25. https://www.proquest.com/openview/09e694dd29fec5bfbd94d8d19ad2d509/1?pq-origsite=gscholar&cbl=1536338
26. https://www.researchgate.net/publication/258725353_Food_Security_ Policy_in_Georgia
27. https://www.stat.gov.az/source/food_balances/?lang=en
28. Katamadze D. (2022), Problems of Food Security in the Conditions of the Open Economy of Modern Georgia. International Journal of Innovative Technologies in Economy. 4(40),
29. Katamadze D., Abuselidze G., Katamadze G., Problem of Agribusiness Management in Georgia,
30. Meskhidze I., Tsetskhladze L., Jabnidze N., Food security problems for developing countries in the conditions of COVID-19: case of Georgia, vol. 5, no. 2. Economics. Ecology. Socium. 2021.

САМВЕЛ АВЕТИСЯН
Старший эксперт научно-исследовательского центра АГЭУ «Амберд», доктор экономических наук, профессор

АШОТ АВЕТИСЯН
Преподаватель финансово-экономического колледжа АГЭУ, кандидат экономических наук, доцент

Сравнительный анализ продовольственной безопасности стран Южного Кавказа.– Для всех стран мира проблема питания населения и продовольственной безопасности является одним из важнейших приоритетов экономической политики. Безусловно, ситуация в разных странах разная, что определяет характер социального обеспечения и аграрной политики страны, стратегию и практические шаги по преодолению внутренних и внешних угроз. Во всех отношениях рассмотрение развития аграрного сектора с точки зрения продовольственной безопасности дает возможность сосредоточиться на важнейшей потребности в питании человека и стремиться к ее наиболее полному и эффективному удовлетворению.

Цель данной статьи - осветить вопросы продовольственной безопасности стран Южного Кавказа - Армении, Грузии и Азербайджана в контексте развития мирового рынка продовольствия в последнее десятилетие и интернационализации экономики, подчеркнуть внешние и внутренние угрозы, а также наметить основные пути их противодействия и регулирования. В работе также уделено внимание вопросам методологии оценки безопасности пищевых продуктов, представлены рекомендации, имеющие практическое значение, и механизмы для их реализации.

Ключевые слова: *Южный Кавказ, сельское хозяйство, продовольствие, самообеспечение, технологии, поддержка, торговля*
JEL: N50, Q18
DOI: 10.52174/29538114_2023.2-57

SAMVEL AVETISYAN
Senior Expert of ASUE Research Center «Amberd», Doctor of Economics, Professor

ASHOT AVETISYAN
Lecturer at ASUE College of Finance and Economics, PhD in Economics, Associate Professor

Comparative Analysis of Food Security in the Countries of the South Caucasus.– For countries worldwide, ensuring population nutrition and food security is one of the highest economic policy priorities. However, the situation varies from one nation to another, determining the nature of social security and

agrarian policy of the country, the strategy and practical steps to overcome internal and external threats. In all respects, considering the development of the agricultural sector from the point of view of food security makes it possible to focus on the most important need for human nutrition and strive for its fullest and most effective satisfaction.

The purpose of this paper is to address food security issues in the South Caucasus countries – Armenia, Georgia and Azerbaijan – in the context of the world food market evolution over the past decade and the increasing internationalization of the economies. It aims to highlight both external and internal threats while outlining the key measures to mitigate and regulate them. The paper also pays attention to the methodology for assessing food safety, offers practical recommendations, and explores mechanisms for their implementation.

Keywords: *South Caucasus, agriculture, food, self-sufficiency, technology, support, trade*
JEL: N50, Q18
DOI: 10.52174/29538114_2023.2-57